

ՍԻՈՆ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 1.

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒՆՎԱՐ 31.
1869.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ.

ՆՈՐԱՄՈՒՏ տարին և Սիոնի նորամուտ չորրորդ շրջանը առիթ կ'ուտան մեզ սակաւ ինչ խորհրդածելու և կամ, լաւ եւս է ասել, խորհրդածութեան նիւթ մատակարարելու մեր արգոյ ընթերցողներուն ։

Տարի մի եւս սահեցաւ անցաւ, և սակայն մեր ազգային կեանքը նշանաւոր փոփոխութիւն մի չունեցաւ ։ Ազգային կարեւոր խնդիրները, որոնք ի սկզբան անցեալ տարւոյն յուզուած և անկատար մնացած էին, այսօր եւս, ի ցաւ սրտի ամենեցուն, տակաւին նոյն վիճակի և դրութեան մէջ են ։ Եթէ ազգային պարբերականներուն մէջէն ի բաց հանենք օտար խնդիրները, այն է քաղաքականութեան, հռովմէական ժողովի և յունական կրօնական միակերպութեան նկատմամբ եղած հրատարակութիւնները և զուտ ազգային մասը նկատենք, կը տեսնենք միայն լոկ կրկնութիւն, նոյնանմանութիւն և ոչ երբէք առ լաւն փոփոխութիւն և նորոգութիւն ։ Իսկ եթէ խոստովանինք, որ ազգային օրագրութիւնք ազգային ժամանակակից շարժութեան կամ անշարժութեան պատկերացուցիչն է, դիւրութեամբ կը նշմարենք, որ ազգային օրագրութիւնք մի բարձրաբարբառ բողոք է ազգային անշարժութեան և տատանմանութեան դէմ ։ Ազգային օրագրութեան հրատարակութիւնները 1868 թուականին մէջ, շատ սակաւ տարբերութեամբ, կրկնութի

digitised by A.R.A.R.@

են միայն 1866ի և 1867ի հրատարակութեանց։ Ինչու։ — Որովհետեւ նոյն խակ ազգային կեանքը մի տարօրինակ կրկնութիւնն է. — կրկնութիւն սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն, կրկնութիւն կաթողիկոսական անկատար խնդրոյ, կրկնութիւն առաջնորդութեանց խնդրոյն, կրկնութիւն Երուսաղէմի կալուածոց խնդրոյն, կրկնութիւն գաւառական ազգայնոց տառապակրութեանց և բողոքարկութեանց խնդրոյն, և ահա կրկնութիւն կրկնութեան, ամենայն ինչ կրկնութիւն է, և ոչ նորոգութիւն, շարժութիւն, և յառաջխաղացութիւն։ Այս խոստովանութիւնը շատ ծանր է զգայուն սրտերու համար, բայց դըժբաղդաբար ստոյգ է և իրական։ Ինչո՞ւ կ'ըսպասենք արդեօք. Կ'ըսպասենք որ վարչական ժողովներու անուններն անգամ իսպառ անհետի՞ն, որով մի ժամանակ հեռաւորաց և մերձաւորաց սրտերը թնդացուցին։ Կըսպասենք արդեօք որ Սսոյ և Աղթամարայ աթոռները իսպառ ամայանա՞ն։ Կըսպասենք արդեօք որ Երուսաղէմ իւր կալուածքներէն և իրաւունքներէն զրկուելով իսպառ մաշի՞ պարտուց տակ և իւր յառաջադիմական ձեռնարկութիւններէն դադարի և վերջանա՞յ։ Կըսպասենք արդեօք, որ գաւառական տառապակիր ժողովուրդները Ազգային վարչութեան ընթացքէն իսպառ յուսահատի՞ն, ցրուի՞ն, գաղթի՞ն, և իրենց համար օտար պաշտպանութիւն և վարչութիւն խնդրելով, իսպառ անհետի՞ն հզօր ազգաց հոսանուտ և բազմակուլ Ովկիանոսին մէջ, ինչպէս հազարներով և բիւրերով անհետացեր են քանի մի դարերէն առաջ։

Եթէ այս սոսկալի օրհասին կըսպասենք, ափսոս որ 19դ դարու մէջ ապրելու սնապարծութեամբ կը պարծինք և յաճախ յառաջադէմ ազգաց օրինակները կը յեղյեղենք։ Վասն զի, ի՞նչ օգուտ պարծենալէն, քանի որ գործք չը կայ։ Ի՞նչ օգուտ տարիներու նորոգութենէն և յառաջադիմութեան ու քաղաքակրթութեան արեւու ծագումէն, քանի որ մենք տակաւին կը քնանանք և կը խորդանք երազներու մէջ։

Մեր ազգային դժբաղդ օրագրութիւնք ներկայի մխիթարութենէն զրկուած՝ ստիպուած է շատ անգամ վաղեմնի անցելոյն փոշիները յուզել, Սահակ, Մեսրոպ և Վռամշապուհ աղաղակել, Յովսէփ, Ղեւոնդ և Վարդան որոնել։ Բայց ո՞վ չը գիտէր որ լոկ անցեալով մխիթարուիլը իրական մխիթարութիւն չէ։ Ո՞վ չըգիտէր, որ քաջագործ նախնեաց փառքը առաւել անարգանք է անմիտ սերնդոց համար, քան թէ պարծանք։ Ո՞վ չը խոստովանիր, որ ազգաց իրական պարծանքը գլխաւորապէս ներկային մէջ է։ Վասն զի, ներկային մէջ չը գործել՝ կը նշանակէ ապրելէն առաջ մեռնիլ, և ո՞վ կարող է ասել թէ անգործ մեռեալները իրաւունք ունին երանութիւն և օրհնութիւն ժառանգելու Աստուծմէ և 'ի մարդկանէ։ Վասն զի, Աստուած մեռելոց և անգործոց Աստուած չէ, այլ կենդանեաց և գործողաց։ Վասն զի, ճշմարիտ երջանկութիւնք եւ կենաց բուն էութիւնը գործելու մէջ է, և Աստուած կեանքը և ժամանակը պարգեւած է յատկապէս գործելու համար, ըստ որում ինքը հանապազ կը գործէ և մարդուն պատուիրած է գործել, քանի որ ժամանակ ունի։

Որչափ ամօթ է մեզ համար որ ժամանակ ունինք և չենք գործեր։ Մեր նախնիքը, ինչպէս երբեմն Իսրայել Երուսաղէմի շինութեան ժամանակ, մէկ ձեռքով սուր բռնած եւ միւսով գործի շինութեան, մի կողմէն

digitised by A.R.A.R.@

Ազգը և Եկեղեցին կը պաշտպանէին արտաքին արհաւիրքներէ, և միւս կողմէն անընդհատ կը գործէին և կը շէնէին, անգործութիւնը մեռելութիւն խոստովանելով և յուսահատութիւնը թերահաւատութիւն։ Այսօր բանութիւնները, տառապանքները և առերմնեցքները վերջացած են։ Այսօր ժամանակը մեզ-աջակից է։ Օսմանեան բարեխնամ Տէրութիւնը մեզ ձեռնտու է, յառաջադէմ ազգերը իրենց օրինակով մեզ առաջնորդ և Յուսած հաւատալ գործակից։ Այսօր մեր աչքով կը տեսնենք, որ լուսաւորութեան և կենդանութեան Պրոպոտիկէն բաց է ազգաց առջեւ։ փրկարար ջուրը շարունակ կը յոսի և փոփաքաղներն ու ճաշապարշները կը յառաջեն, մէջը կը թափին, կը որբուին իրենց ախտերէն և կը բժշկուին իրենց հիւանդութենէն։ Եթէ անտէր և անօգնական ենք, եթէ անդամալոյծ ենք և ինքնին աճապարելու կարողութիւն չունինք, գէթ 38 ամեայ անդամալուծին նման հաստատուն կամք ունենանք բժշկութեան, որպէս զի ամենաբարի Այտուածը բռնէ մեր Ազգի ձեռքէն, յոտին կանգնեցնէ և ասէ։ — Ինա՛, վե՛ր ելիր։ Ինչպէս՝ ոՀ փառաւորեալ։ Հաստատուն կամք ասացինք։ և կարի իրատաւոր։ վասն զի հաստատուն կամքն առ գործունէութիւնն է։ որոն առջեւ քնութիւնը կը խոնարհի։ Հաստատուն կամքն է, զոր Այտուած կը պահանջէ հիւանդներէն։ կոյրերէն ու կաղերէն, և ապա կը բժշկէ։ Այս է Այտուծոյ յաւիտենական հարցմունքը։ Լսի՞ր ողջ լինիլ — և այ՞ պատասխանողներուն միշտ կը գործակցի և կը բժշկէ։ Բայց այ՞ն եւս ի բոլոր որտէ պէտք է որ բոլոսած լինի, ապա թէ ոչ չկը բժշկութիւն։ Բաւեի մի տարիէն ի վեր մեր Ազգը սթափութեան նշաններ եւ վերակենդանութեան իշձեր ցոյց տուաւ։ բայց տակաւին իւր հաստատուն կամքը չը յայտնեց։ տակաւին իւր սրտաբուխ այն շարտասանեց, և ահա այս է պատճառն, որ տատամութիւն, անտարբերութիւն, անհոգութիւն եւ ատնասարտութիւն տակաւին կը տիրեն մեր ազգային կեանց վրայ և կը յապաղեն մեր առողջութիւնը։ կենդանութիւնը և յառաջադիմութիւնը։

Ազգ՝ եթէ կը փափաքինք կենդանութեան և յառաջադիմութեան։ եթէ կը ցանկանք մեր ազգային գործերը ոնօրինել այնպէս, ինչպէս՞ մեր հմտրէն Ազգի օգուտը կը պահանջէ։ պարտաւոր ենք մեր բոլոր կամքը եւ ջանքը՝ ի կիր արկանել մեր ազգաշէնութեան համար, որպէս զի և Այտուած պակէ մեր աշխատանքը։ Ուրեմն նորամուտ տարեոյս հետ մեր համայն եղբարց համար մաղթելով հոգարարն կամ, զիրարու տիրա և անգրաց գործունէութիւն։ որոնք խիստ պակաս էին անցեալին մէջ, գառնանք այժմ մի քանի խօսք եւս Սիոնի մասին խօսելու։

Սիոնը, ինչպէս անշուշտ գիտած են բանիմաց ընթերցողք։ առաւելք բանասիրական յօդուածներ հրատարակեց իւր նախորդ շրջանին մէջ, քանի թէ ազգային խնդրոց վրայ խօսելու։ Կարող ենք ասել՝ որ քանի մի խնդրոց նկատմամբ բոլորովին լռութիւն պահպանեց։ Սակայն հրապարակաւ կը խոստովանինք, որ այս լռութեան պատճառը ոչ թէ Սիոնի անտարբերութիւնն էր կամ անձնանվասութիւնը, այլ ըստ պատեհի պարագաներու։ Սիոնը կը յուսայ ներկայ շրջանին մէջ ազգային խնդրոց վրայ աւելի խօսել և խորհրդածել, միշտ յարգելով իւր սկզբունքը։ որ է իւրաքանչիւրը իրենի դիր ընդհանուր պատմութիւն քննել և

digitised by A.R.A.R.@

պարզել, քան թէ մանաւորաց վերածել։ Այց երանի թէ մանաւորներըն եւս այնքան առաքինի լինէին, որ իրենց կրքերը կարենային ընդհանուրի օգտին զոհել, քան թէ ընդհանուրի օգուտը իրենց սնձին։ Այրանի թէ տոգամարդ օրէն գրական տապարէզ ելնէին, մէրք տային և մէրք առնէին, քան թէ գաղտնի մէջտեղ մէջ վարագոյր զայրանային և մինչեւ անգամ վիրաբեր մտաբերեին Աբաբելական Աթոռոյս, որոյ վիրաբը, ինչպէս ընդհանուրին, նոյնպէս և մտաբերողներուն կը պատկանի։ Միտքը կը յուսայ նոյնպէս ներկայ շրջանին մէջ գրաքննական յօդուածներ եւս հրատարակելը բոլոր ազգինային պատկառ կարգով անկողմնակցութեան։ Իսկ աշակերտաց ձառերու, թարգմանութեանց և տաղաչափութեանց տպագրութեան մասին ապահով ենք ապրդէն որ ներողամիտ կը լինին մեր ընթերցողները։ որովհետեւ մեր նպատակն է առաւել քաջալերել աշակերտաց ջանասիրութիւնը, քան թէ իրբ մեծամասն շարագրածներ հրատարակել։

Այս նորամուտ շրջանին մէջ պարտք կը համարինք նոյնպէս հրատարակաւ շնորհակալութիւն մատուցանել, թէ մեծարգոյ բաժանորդներուն իրենց համակութեան և քաջալերութեան համար, և թէ այն անաչառ բանագէտներուն, որոնք նամակաւ զանազան գիտութիւններ գրած են մեզ և խոստացած են գրել։ Այս տեսակ անձինքը Միտնի ճշմարիտ բարեկամներն են, և այս մեր անկեղծ խոստմանութիւնն է, զոր կը յայտնենք հրատարակաւ։

Տարեմուտին Մենասարեան Պատրիարքը, հայրապետ ազգութեան և նեղով ժառանգաւոր սանուց, օրհնեց և քաջալերեց ամենքը խրատական գեղեցիկ յորդորներով։ Եւ աշակերտաց կողմէն ինչպէս որդիական երախտագիտութեան հետեւեալ ճառը կարդացուեցաւ և երգը երգուեցաւ, զոր ի խրախոյս շարագրողաց արժան կը համարինք հրատարակել։

ՄԵԾԱԽՆԱՄ ՍՐԲԱԶՈՆ ՀԱՅՐ

Ինքութեան և ժամանակի Աբրահամ կը պարգեւէ մեզ այսօր Նոր տարի, և զգաստն պատերը յաւիտեանս նոր բառի այլատարաղ հնչումին, կլսեմ ինքն մը և խիստն իրենց մասց մէջ հին տարի մը բարձրաձայնիկ կը ծնի։ Գոհութեան ենթարկելով նոր ու հին, ասենցմէ ազատ եկած ապառնի մը, կ'ըսէին ողբալ անցեալին վրայ, հրճուելի ի սիրտ և ի հոգի ներկայիս մէջ, և ամենն ջանք ի գործ դնել ապագային համար։ Այս մեր ոք չմոռանալով կը վկայէ որ մի քանի ժամանակին մէջ ոգեալ եւ մանկամայն հրճուելը կատարեալ հանգստութեան կերպարանք ունի։ Այս կայն երբ ձեռքը ճակտին վրայ դնելով եւ անցեալին վրայ հեռատես դիտողութեամբ ակնարկ մը ձգելով ծերերին տեղեկութիւն հարցնէ՝ «Ապրելը դու ցնարս քո և պատմեցեն քեզ, ցնարս քո և ասացեն քեզ», իսկայն կը տեսնէ, որ գրեանքը պատերը կարդալ չեն անտարբեր կենալ այս նշանաւոր աւուրս մէջ, այլ պիտի ազգան աղեւալի անցեալին վրայ։ Այսպն զի պիտի տեսնուի որ հնագոյն անցեալին մէջ բոլոր մարդկութիւնը ապիտութեան զոհ եղած էր, պիտի տեսնուի, որ ապիտութիւնը հաստատած էր իւր պինձեայ գահը իւրաքանչիւրի մասց վրայ, բառնութիւնը

digitised by A.R.A.R.@

իրեն զօրավիգ ունենալով, բռնութիւնը կ'ըսէ, որպէս տուած հարուածները անքարժէքն են։ Այսպէս զի, ուր որ բռնութիւնը անպարգել կը գտնէ, այն տեղ ժողովրդին բարոյականութիւնը ապականութեան մէջ կը գտնուի, և ուր որ ժողովրդի մը բարոյականութիւնը եղծեալ է, նոյն ժողովուրդը անշնչդիակ մը կը համարուի։ Այսպէս զի բռնութիւնը նոյն իսկ անշնչդիակ տարերաց անդամ կը ներգործէ, բռնութեան ուժերի տակ երկիրը անդամ իւր որգանները կը գոցէ և պտուղ չէ մնար կարարէր։ Ո՞նչպէս կարող է շարունակել այն սիրտը՝ որ իր նմանեցեալ վիշտը և ցաւը կը զգայ, երբ կը տեսնայ և չափաբանական համեմատութեամբ կը բաղդատէ իւր ներկայ վիճակը միջոցաբար եան վիճակին հետ։ որք ոգիտուն գառագրդին մէջ փակուած, իսպառ զուրկ ըլլալով յառաջադիմութենէն, ազատ գիտութենէն, կը թարթափէին խորին խաւարի մէջ։ Ինչպէս զաւակը զուրկ էր այն սէրն բարիքներէն, զորս այժմ մենք կը վայելենք ուրախ սրտիւ։ Բայց մինթէ կարող ենք անգիտ ըլլալ նոյա վիճակին վրայ։ Այն սիրտը որ չը վրշտանար ընդ վշտացողս և լալ ընդ լացողս, այն սիրտը մարդկէղէն սիրտ չէ, այլ քարեղէն։ Մենք ըսինք որ գիտյաւն որտերը կ'ուզան անցեալին վրայ, և ցնծութեան ատն կը կատարեն ներկայիս մէջ։

Արքապան Հայր, կարծեմ բաւականին այս համառօտ բացատրութեան վրայ մտքերը պիտի հանդարտին և հանգստանալով իրաւունք պիտի տան մեր տկար խօսքին ստուգութեանը — այս է մի և նոյն ժամանակին մէջ ողբալ եւ ցնծալ։ Արութիւն ցնծութեան և պատճառները համառօտիւ յառաջ բերենք։ Այսոր կ'ուրախանան այն որտերը, որոնք իւրեանց այժմեան վիճակէն գոհ ըլլալով։ Նաեւ ապնարկ մը կը ձգենք անցեալ վիճակին վրայ։ որմէ ամենայն աշխատութեամբ այս բարելաւ վիճակին դիմած են։ Ա՛ուրախանան, որովհետեւ ժամանակին, իբրև անբան, ոչ գիտութեան և կրից ստրուկներ դարձած էին, բայց վրան ժամանակ անցնելով զգայնին իւրեանց վիճակի թշուառութիւնը, զգայնին՝ որ իրենց բնութենէն սահմանուած յատուկ վիճակը այն չէ, այլ այն ժամանակին անպարմարութեանը և կամ թէ իրենց մտաց կատարութեան պատճառաւ էր որ կը գեղերէին այն տեղ։ Աւասի բաւականին խորհելով եւ իւրեանց մտաց խորհուրդ հարցնելով կարծանեցին։ խորտակեցին տգիտութեան պատուարները, փշրեցին խաւարի ամրոցները, թօթափեցին կոյր ստրկութեան լուծը, կամ թէ ուրիշ կերպով լսենք։ բարդաբարութիւն ունեցան արժանաւոր այնպիսի հզօր բաղկի մը օժանդակութեանը, որ մէկ ձեռքով բռնած ունի դաշոյն մը, որով կը պատուէ տգիտութեան սեւամթոյր վարագոյրը։ և միւս ձեռքով ոգեգարութեան նժարը, որով անիրաւութեան նենգութիւնը կը խարդախուի թիւնը յայտնելով կը խարդախուի աշխարհի առջեւ։ Այս հզօր բազուկն է ժամանակը, այս յաւիտենականութեան զաւակը՝ որ ձախ ձեռքով մահ կը սփռէ և կործանումն ժամանակին զանազան փոփոխութեանց վրայ անարբեր կեցցէին։ և աջ ձեռքով շինութիւն, կանգնումն և կեանք իւրեանց կարճատեւ միջոցը ժամանակին պահանջման համեմատ գործ դնողին։ մէկ խօսքով, ժամանակը կը փարատէ մարդկային մտաց վրայ սիրտպատեաց կուրութեան մշուշը, և մարդոյս աչքը բացուելով կը ճանաչէ իւր իսկ դաւանքը, իւր թշնամին, իւր վրայ քստ-

digitised by A.R.A.R.@

նոցեաղ բարբարոսը — ազիատութիւնը և խաւարը, որ իւր սեփական իրաւունքներէն և մուտց լուսաւորութենէն կը զրկեն։ Ուստի առանց ժամանակ կամ միջոց անցնելու, ձայն վերցուց և բողոքեց արդարութեան տաճարին — Վիսուկրատիան, եւ. երբ նոյն տաճարին իւր բողոքին իրաւացի ըլլալուն վճիռը ընդունեց։ իսկայն համարձակ գլուխ վերցուց բռնութեան դէմ, և հաճութեան կէտեր ցուցուց նոյն բռնաւորի իշխանութենէն ելլել, ուր մահուան և անբարոյականութեան կամը կը ծծեր։ եւ բռնութեան խեղդիչ շունչ մը կը շնչէր ակամայ։ Ազատամիտ մարդկութիւնը չը տակաց այս բարբարոս ժամանակի դրութեանը։ ուստի դիմեց այն ժամանակի ծոցը։ ուր ազատութեան սկզբունքը իբրեւ առաքինութեան միջոց կը գործադրուէր և կը յարգուէր։ Դիմեց այն ժամանակին ծոցը, որ մարդկութեան համար շատ բարիքներ պատրաստի ունէր։ Մեռեալ կամ թէ ոչխոտութեան անրմբերելի ծոցն տակ ճնշեալ մարդկութիւնը կենդանութեան ոգի առաւ, սթոփեցաւ իւր ահագին քեռի ծանրութենէն։ ձերը իւր թարշամեալ այտից փոց ուրախական ժպիտ մը տարածեց։ երիտասարդը տակի դարման մէջ ապրիլ կարծեց։ իսկ տղայն յուսալոր ապագայի փառաւորութենէ յափշտակուեցաւ։ Բայց դժուարին կէտը և միջոցը հոս է։ այսինքն սեռ. փոլը միայն բաւական չէ։ հարկաւոր է առաջ երթալ, և առաջ երթալու համար առաջնորդ պէտք է։ Արդարութիւնը յառաջադէմ և հսկայաքայլ ժամանակի միջոցաւ լուսաւորութեան հասնելու նաւաս մը կը կարօտէր, եւ այս մասին բաղդը բանեցաւ։ վերաբերուեց նաւը։ մեռեալ մէջն պարզեց առագաստը և սկսաւ նաւարկել յառաջ և յառաջ։ Ազգաց յառաջադիմութեան այս նաւը եղաւ դպրոցը։ մամուլը, կամ այլապէս ասել՝ կրթութիւնը և դաստիարակութիւնը։

Արդ՝ Արքազան Հայր, քանի որ ակներև կը տեսնենք, որ գուք ժամանակին յարմար կը գործէք և այն նաւասով կը փափաքիք նաւարկել, որով նաւարկած են յառաջիսաղաց ազգերը, քանի որ կը գանք, որ մենք եւս Ձեր շնորհիւ նոյն նաւուս մէջ կը գտնուինք, քանի որ այս ամենը կը պատկերացնենք մեզ, մեր սիրտը ուրախութեամբ կը լցուի և այս տարեկան նոր շնչարին մէջ կը պարտաւորինք յայտնել Ձեզ մեր անպայման երախտագիտութիւնը և միանգամայն թախանձել արարիչ Հայրն տիեզերաց և ժամանակաց, որ պարգեւէ Ձեզի երկար կեանք, յաջողութիւն, նորութիւն և նոր զօրութիւն, որպէս զի մենք Ձեզմով և Դուք մեզմով և ամենքս Աստուծով կարենանք յառաջ երթալ և չ՝ երթիք յետս։

Ընդունեցէք՝ սուրբեմն մեր՝ անկեղծ շնորհակալութիւնը Ձեր բոլոր գործակիցներով հանդերձ, և Աստուածաշնչոց հաճի լսել մատաղերամ մանկանցս խնդրուածքը, զոր յամենայն ժամ և մանաւանդ այսօր առ ինքն կ՝ուղղենք Ձեր կենդանութեան և յաջողութեան համար։

Ի դիմաց Ժառանգաւորաց
Դաբրիել Կարապետեան
Խարբերդի։

1869 Յունվար 1
Ամրոսաքիմ։

digitised by A.R.A.R.@

ԵՐԳ

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՈՑ

Այսօր ընդ մուտ նորոգ տարւոյս
Զայն աւետեաց և խրախոյս
Հնչի յականջս մատաղ սանուցս
Թէ հին է անց, նորն եհաս,
Առէք հոգի, նոր զօրութիւն,
Տուք տարաշէն փառատուրութիւն։
Այսօր ի բաց գլեն թախիծք,
Ի բաց մերժին խոր անդաճմունք,
Բանդի յերկնուստ մեզ պարգեւի
Նոր ժամ, նոր օր և նոր տարի։
Ցնծա՛ ուրեմն, Հայր մեր բարի,
Երիցուն հովիւ հայկեան զարմի։
Այսօր բանի նոր տապարէզ,
Գոտի ընդ մէջ, լապտեր ի ձեռս,
Երթուք յարգոյ յառաջ իսպան,
Իսկ հեղգասիրաք՝ յետոս մնան։
Ուրեմն կեցցէ՛ Հայր մեր տարի,
Որ հարդէ մեզ շաւիղ բարի։
Հայ ծն արիք, մատաղերամ
Ինկերակիցք իմ համերամ,
Երիտասա՛ք յուզիլ ուսման
Ի նորամուտ տարւոյս շրջան։
Այս են յար իղձք մեր գիշատ Հօր,
Լու սուրբ խոկմունք հանապազօր։
Աղօթք ուրեմն, սրդիք Հայկեան,
Կիթառ ի ձեռս, երգ ի բերան։
Տայցուք փառս Հօրն վերին,
Որ ձնեաց մեզ զայս նոր տարին։
Աղաղեսցուք արդ ջերմիկ սրտով
Հօրդս մեր տալ զամբս յոլով։

Աշխարհ Խոր. Վարդ.
Մելքոն Յակոբեան
Թրպոյի։

1869 Յունվարի 1
Մշտասաղմ։

Հետեւեալ փոքրիկ գրուածքը որ զրկուած է մեզ Կալկոմիայէն ուժգնակը համարինք հրատարակել։ Համառօտ ծանօթութիւն մի տալով ընթերցողաց արեգակի խաւարման մասին։ որ պատահեցաւ անցեալ տարի։

« Խոլորական խաւարումն ի 18 Օգոստոսի 1868 — ի նկարէ ինչ տաւաքեալ առ ծովային կառավարութիւնն, ի Նաւապետաց | Էքսորդսնիս Չոգենուսաս։

Խոլորական խաւարումն նշմարեալ ի | Էքսորդսնիս Չոգենաւ է ի 18 օգոստոսի 1868 — ի հիւսիսային տարածութեան, 15—42, և յարեւելեան երկայնութեան 83—31։ ըստ « Գրինվիչ » ժամապահութեան։ Ի 15 երրորդ ժամու ի հինգերորդ բաղէի, և յ33 վայրկենի։ Արեգակն սկսաւ խաւարիլ է 15—41 հիւսիսային տարածութեան և 83—37 արեւելեան երկայնութեան։ Ըստ « Գրինվիչ » ժամապահութեան, ի 15 երրորդ ժամու ի հինգետասան երրորդ բաղէի, և ի 12 վայրկենի։ Խաւարումն էր բոլորական, և տեւեաց 5 բաղէս եւ 57 վայրկեանս։ Ի տարածութեան հիւսիսայ 16—1 — եւ յերկայնութեան արեւելից 43—40— ըստ վերոյին ժամապահութեան, ի 17 ժամու, 50 բաղէի և 28 վայրկենի արեգակն պարզեցաւ ի ստուերէ լուսնին։

Չոգենաւն յընթացս խաւարմանն խաղայր գէպ ի յարեւելս հիւսիսայ, ընդհանալով առ ժամն մղնու իբրեւ 7, մինչ զկնի վախճանի, խաւարմանն և գաւ անդրէն ի ստորակայն ընթացս իւր խաղալով յառաջ մղնու մեստան։

Նշմարանք։ — Յորժամ լուսինն մի անգամայն ծածկեաց զերեսս արեգականն, երկու մասունք երկայնաձեւ ամպոց երեւեցին եկանել յերկուց կողմ

Հետեւեալ փոքրիկ գրուածքը որ զրկուած է մեզ Կալկոմիայէն ուժգնակը համարինք հրատարակել։ Համառօտ ծանօթութիւն մի տալով ընթերցողաց արեգակի խաւարման մասին։ որ պատահեցաւ անցեալ տարի։

« Խոլորական խաւարումն ի 18 Օգոստոսի 1868 — ի նկարէ ինչ տաւաքեալ առ ծովային կառավարութիւնն, ի Նաւապետաց | Էքսորդսնիս Չոգենաւաս։

Խոլորական խաւարումն նշմարեալ ի | Էքսորդսնիս Չոգենաւ է ի 18 օգոստոսի 1868 — ի հիւսիսային տարածութեան, 15—42, և յարեւելեան երկայնութեան 83—31։ ըստ « Գրինվիչ » ժամապահութեան։ Ի 15 երրորդ ժամու ի հինգերորդ բաղէի, և յ33 վայրկենի։ Արեգակն սկսաւ խաւարիլ է 15—41 հիւսիսային տարածութեան և 83—37 արեւելեան երկայնութեան։ Ըստ « Գրինվիչ » ժամապահութեան, ի 15 երրորդ ժամու ի հինգետասան երրորդ բաղէի, և ի 12 վայրկենի։ Խաւարումն էր բոլորական, և տեւեաց 5 բաղէս եւ 57 վայրկեանս։ Ի տարածութեան հիւսիսայ 16—1 — եւ յերկայնութեան արեւելից 43—40— ըստ վերոյին ժամապահութեան, ի 17 ժամու, 50 բաղէի և 28 վայրկենի արեգակն պարզեցաւ ի ստուերէ լուսնին։

Չոգենաւն յընթացս խաւարմանն խաղայր գէպ ի յարեւելս հիւսիսայ, ընդհանալով առ ժամն մղնու իբրեւ 7, մինչ զկնի վախճանի, խաւարմանն եւ գաւ անդրէն ի ստորակայն ընթացս իւր խաղալով յառաջ մղնու մեստան։

Նշմարանք։ — Յորժամ լուսինն մի անգամայն ծածկեաց զերեսս արեգականն, երկու մասունք երկայնաձեւ ամպոց երեւեցին եկանել յերկուց կողմ

digitised by A.R.A.R.@